Հավելված N 3
ՀՀ կառավարության 2026 թվականի
հոկտեմբերի 29-ի N 1581-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏՈՒՄ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՈԼՈՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐԵՎԷ ՏՎՅԱԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՑԱԿԱՅՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրում և նույնականացման քարտում ամրագրման ենթակա տվյալների լրացման, ինչպես նաև ամրագրման ենթակա որևէ տվյալի բացակայության դեպքում համապատասխան դաշտի լրացման կանոնները:

2. Անձնագրում և նույնականացման քարտում անձնական տվյալների լրացման համար հիմք են ընդունվում անձի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալները, որոնք անձնագրում և նույնականացման քարտում ամրագրվում են առանց փոփոխության:

3. Քաղաքացու անձնագրում և նույնականացման քարտում լրացվող անձնական տվյալներն ամրագրվում են հայերենով և անգլերենով:

4. Եթե օրենքով պարտադիր չի համարվում անձնագրում կամ նույնականացման քարտում լրացման ենթակա որևէ տվյալի առկայությունը, և այդ տվյալը բացակայում է, ապա անձնագրում կամ նույնականացման քարտում համապատասխան դաշտը չի լրացվում:

2. ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Անձնագրի տիպը լրացվում է անգլերեն՝ «PP»:

6. Տրամադրող երկրի կոդը լրացվում է անգլերեն՝ «ARM»:

7. Անձնագրի համարը ինը նիշից բաղկացած եզակի համար է, որը ձևավորվում է փաստաթղթի տպագրման ընթացքում: Անձնագրի համարը նույնությամբ ամրագրվում է անձնագրի քաղաքացու տվյալների էջում, մեքենայաընթեռնելի գոտում՝ ներառյալ քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության «Մեքենայաընթեռնելի ճամփորդական փաստաթղթեր» 9303 փաստաթղթի 8-րդ հրատարակության 4-րդ մասի համաձայն ձևավորված ճշգրտող թիվը, տվյալների էլեկտրոնային պահոցում:

8. Անձնագրում քաղաքացու ազգանունը և անունը հայերեն և անգլերեն ամրագրվում են բնակչության պետական ռեգիստրում առկա գրառմանը համապատասխան:

9. Անձնագրում ծննդյան վայրը լրացվում է բնակչության պետական ռեգիստրում առկա ծննդավայրի տվյալների հիման վրա: Որպես ծննդավայր նշվում է պետությունը: Պետությունը անձնագրում նշվում է ISO 3166-1:2020 միջազգային ստանդարտի համապատասխան եռատառ ծածկագրով: Եթե բնակչության պետական ռեգիստրում որպես ծննդավայր նշված է քաղաք, գյուղ կամ այլ բնակավայր կամ վարչատարածքային միավոր, ապա տվյալ բնակավայրի կամ վարչատարածքային միավորի պատկանելությունը որևէ պետության որոշվում է ISO 3166-2:2020 միջազգային ստանդարտով, իսկ այդ ստանդարտով որոշելու անհնարինության դեպքում՝ միջազգային պաշտոնական աշխարհագրական տեղեկատուների հիման վրա:

10. Անձնագրում սեռի նշումը հայերեն կատարվում է «Ա»՝ արական սեռի դեպքում, և «Ի»՝ իգական սեռի դեպքում, իսկ անգլերեն՝ «M»՝ արական և «F»՝ իգական սեռի դեպքում:

11. Անձնագրում քաղաքացիությունը լրացվում է բնակչության պետական ռեգիստրում առկա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության տվյալին համապատասխան: Անձի՝ այլ պետության քաղաքացիություն ունենալու դեպքում անձնագրում ամրագրվում է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը անձնագրում նշվում է միայն անգլերեն՝ «ARM»:

12. Անձնագրում ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը լրացվում են բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա՝ սույն որոշման N 1 հավելվածի N 3 ձևին համապատասխան՝ ամսաթիվը և տարին նշելով թվերով, իսկ ամիսը՝ տառերով՝ հայերեն և անգլերեն:

13. Անձնագրի թողարկման օրը, ամիսը և տարեթիվը լրացվում են այն օրը հիմք ընդունելով, երբ լիազոր մարմինը հրահանգել է մասնավոր գործընկերոջը տպագրել անձնագիրը:

14. Անձնագրի վավերականության ժամկետը լրացվում է՝ հաշվի առնելով անձնագրի թողարկման ամսաթիվը և օրենքով անձի համապատասխան տարիքային խմբի համար սահմանված վավերականության ժամկետը:

15. Անձնագիր տրամադրող մարմինը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունն է, որն անձնագրում նշվում է միայն հայերեն՝ ՆԳՆ:

16. Քաղաքացու լուսանկարը և ստորագրությունն ամրագրվում են անձնագրի անձնական տվյալների էջում և տվյալների էլեկտրոնային պահոցում, իսկ մատնադրոշմները՝ տվյալների էլեկտրոնային պահոցում, եթե օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն այդ կենսաչափական տվյալները հավաքագրվել են:

3. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏՈՒՄ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

17. Նույնականացման քարտում քաղաքացու ազգանունը, անունը և հայրանունը հայերեն և անգլերեն ամրագրվում են բնակչության պետական ռեգիստրում առկա գրառմանը համապատասխան:

18. Նույնականացման քարտում քաղաքացու անվան և հայրանվան անգլերեն գրառման նկատմամբ կիրառվում են անձնագրում անվան և ազգանվան անգլերեն գրառման կանոնները:

19. Յուրաքանչյուր նույնականացման քարտի դրա տպագրման ընթացքում տրվում է ինը նիշից բաղկացած եզակի համար: Նույնականացման քարտի համարն

ամրագրվում է նույնականացման քարտի տեսանելի զննման գոտում, մեքենայաընթեռնելի գոտում և տվյալների էլեկտրոնային պահոցում:

20. Նույնականացման քարտում սեռի նշումը հայերեն կատարվում է «Ա»՝ արական սեռի դեպքում, և «Ի»՝ իգական սեռի դեպքում, իսկ անգլերեն՝ «M»՝ արական և «F»՝ իգական սեռի դեպքում:

21. Նույնականացման քարտում քաղաքացիությունը լրացվում է բնակչության պետական ռեգիստրում առկա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության տվյալին համապատասխան: Անձի՝ այլ պետության քաղաքացիություն ունենալու դեպքում նույնականացման քարտում ամրագրվում է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը նույնականացման քարտում նշվում է «ARM»:

22. Նույնականացման քարտում ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը լրացվում են բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա՝ սույն որոշման N 2 հավելվածի N 1 ձևին համապատասխան:

23. Նույնականացման քարտի թողարկման օրը, ամիսը և տարեթիվը լրացվում են այն օրը հիմք ընդունելով, երբ լիազոր մարմինը հրահանգել է մասնավոր գործընկերոջը տպագրել նույնականացման քարտը:

24. Նույնականացման քարտի վավերականության ժամկետը լրացվում է՝ հաշվի առնելով քարտի թողարկման ամսաթիվը և օրենքով նույնականացման քարտի համար սահմանված վավերականության ժամկետը՝ սույն որոշման N 2 հավելվածի N 1 ձևին համապատասխան:

25. Նույնականացման քարտ տրամադրող մարմինը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունն է, որը հայերեն նշվում է՝ ՆԳՆ, անգլերեն՝ MIA:

26. Նույնականացման քարտում քաղաքացու հանրային ծառայությունների համարանիշը լրացվում է բնակչության պետական ռեգիստրում տվյալ քաղաքացուն տրամադրված հանրային ծառայությունների համարանիշին համապատասխան:

27. Քաղաքացու լուսանկարը և ստորագրությունն ամրագրվում են նույնականացման քարտի դիմերեսի տեսանելի զննման գոտում և տվյալների էլեկտրոնային պահոցում, իսկ մատնադրոշմները՝ տվյալների էլեկտրոնային պահոցում, եթե օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն այդ կենսաչափական տվյալները հավաքագրվել են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

30.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ